ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐՈՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ԹԱԴԵՈՍ ԵՒ Ս. ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(3 դեկտեմբերի, 2016 թ.)

Սիրելի՛ բարեպաշտ քույրեր եւ եղբայրներ,

Այսօր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին մեծ հանդիսավորությամբ նշում է իր առաջին լուսավորիչների, Հայոց Հավատի հիմնադիր առաքյալների՝ Թադեոսի եւ Բարդուղիմեոսի տոնը: Օրն այս համազգային նշանակություն ու համազգական խորհուրդ ունի, որով ազդարարվում է Հայ ժողովրդի քրիստոնեական պատմության սկիզբը. մի պատմություն, որ շարունակում է հիացմունքի եւ ներշնչման աղբյուր լինել բոլոր քրիստոնյա ժողովուրդների համար, գրավել դեպի այն արտասովորն ու գեղեցիկը, որ հատուկ է Հայոց բարեպաշտական ոգուն: Իմ խորին համոզմամբ՝ այս հարգանքի հիմնական պատճառներից մեկն այն է, որ հիշյալ պատմությունը հոգեւոր կյանքի վերաբերյալ շատ առանցքային մի բացահայտում է յուրաքանչյուր քրիստոնյայի համար. այն ուսուցանում է մեզ, որ Հավատը պահանջում է հավատարմություն: Այս իմաստով օրվա խորհուրդը ոչ միայն առիթ է ընձեռում՝ վերահաստատելու մեր ուխտը Սուրբ առաքյալների քարոզչության հանդեպ, այլեւ խորհրդածելու այն աստվածային շնորհի մասին, որով Հայ հոգեւոր անդաստանի մշակության նվիրական գործը հանձնարարվեց Տիրոջ Հավատարիմ երկու վկաներին՝ Թադեոսին եւ Բարդուղիմեոսին, որոնց անմահ հիշատակն է պանծացնում այսօր Մայր Եկեղեցին՝ հրավիրելով իր զավակներին՝ մասնակից լինելու այն մեծ ուրախությանը, «որ ի վեր է քան զամենայն միտս եւ զբանս»:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, մեր Եկեղեցու Սրբազան ավանդության համաձայն՝ Եդեսիո Հայոց Աբգար Թագավորին բժշկելուց հետո Թադեոս առաքյալն իր քարոզչությունն է շարունակում Արտազ գավառում: Առաքյալի վկայաբանությունից տեղեկանում ենք, որ նա բազում հրաշքներ է գործել Հայոց մեջ, պատճառ հանդիսացել շատերի դարձի, այդ թվում

Հայրատունկ այգւոյն հրեղէն պարիսպք եւ բարձր աշտարակ, ոսկեղէն բաժակք
եւ ժիր մատռուակ. Հայաստանեայց հայր հոգեւոր Բարդուղիմէոս եւ Թադէոս՝
բարեխօս լերուք առ Տէր վասն անձանց մերոց *(Շարական)*

Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալների վկայությունը սոսկ պատմական նշանակություն չունի մեզ համար, որը փաստում է Հայոց Եկեղեցու առաքելական ծագումը: Այն առավել կարեւորվում է իբրեւ հոգեւոր իրադարձության սկիզբ, որով ազդարարվում է քրիստոնեական ոգու ծնունդը հայ մարդու կյանքում *(Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյան)*

նաեւ Սանատրուկ թագավորի դստեր՝ Սանդուխտ կույսի: Բարդուղիմեոս առաքյալի մասին պատմվում է, որ նա իր քարոզչությունը Հնդկաց աշխարհում ավարտելուց հետո շտապում է Հայաստան՝ օգնելու Թադեոսին: Նրա գործունեության վայր է հիշատակվում Գողթն գավառը, որ հայանի էր իր հեթանոսական երգերով: Նրա քարոզչության եւ բժշկությունների արդյունքում բազում հոգիներ դարձի են գալիս, ընդունում մկրտություն, այդ թվում՝ նաեւ արքայաքույր Ոգուհին: Երկու առաքյալներն էլ նահատակվում են հայոց Սանատրուկ թագավորի ձեռամբ: Թադեոս առաքյալի նահատակության վայր է նշվում Արտազը, իսկ Բարդուղիմեոսինը՝ Աղբակը: Միեւնույն ավանդության համաձայն՝ Թադեոսն իր հետ Հայաստան է բերել աստվածամուխ Գեղարդը, իսկ Բարդուղիմեոսը՝ Սուրբ Աստվածածնի պատկերը:

Սիրելի՛ բարեպաշտ հայորդիներ, Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալների վկայությունը սոսկ պատմական նշանակություն չունի մեզ համար, որը փաստում է Հայոց Եկեղեցու առաքելական ծագումը: Այն առավել կարեւորվում է իբրեւ հոգեւոր իրադարձության սկիզբ, որով ազդարարվում է քրիստոնեական ոգու ծնունդը հայ մարդու կյանքում: Այդ ոգին լավագույնս արտահայտվել է այն ավանդի անաղարտ պահպանության միջոցով, որ կտակվել է Հայոց աշխարհին Քրիստոսի վարդապետության երկու մատուվակների կողմից: Ասվածի ցայտուն դրսեւորումը պատմության ընթացքում հաղթահարված բազում փորձություններն են, որոնք չեն հաջողել հեռացնել մեզ մեր առաքելական ինքնությունից: Ահա այստեղ է, որ տեսանելի է դառնում այն հոգեւոր ժառանգական գիծը, որով քրիստոնյա հայ ժողովուրդը կապվում է իր հավատի հիմնադիրների առաքելությանը: Այդ գծի շեշտված արտահայտություն պետք է համարել այն իրողությունը, որ մեր Եկեղեցին կոչվում է Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի: Աշխարհի մյուս քրիստոնյա ժողովուրդների կողքին միայն հայ ազգն է, որ այդքան զորավոր կերպով ընդգծում է իր հոգեւոր ժառանգականության ակունքը: Եւ սա չենք անում՝ հպարտությունից դրդված, ցույց տալու համար, թե հին ենք, այլ անում ենք հայոց հավատի երկու ախոյանների հանդեպ հոգեւոր պատասխանատվությունից մղված:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, այսօրվա խորհրդին համապատասխան շուք հաղորդելու համար Ամենայն Հայոց Հայրապետի բարձր տնօրինությամբ Հընթացս Սուրբ Պատարագի, եկեղեցական հանդիսավոր թափորով Մայր Տաճար բերվեց աստվածամուխ Սուրբ Գեղարդը: Ոչ միայն հայ ժողովրդի, այլեւ համայն քրիստոնյա աշխարհի համար բացառիկ նշանակություն ունի Սուրբ Գեղարդը. նրան երկրպագելու համար ամեն տարի աշխարհի տարբեր ծագերից ուխտավորներ են այցելում մեր երկիր: Այն ոչ միայն Հայոց հավատի առաքելական ծագման խորհրդանիշ է մեզ համար, այլեւ աստվածային ողորմության բարձրագույն արտահայտություն հայ ժո-

ղովրդի կյանքում, քանզի Նախախնամությունը հայ ազգին ընտրեց՝ պահպանելու քրիստոնեական հավատի մեծագույն սրբություններից մեկը՝ աստվածամուխ Սուրբ Գեղարդը, որի վրա մեր Տեր Հիսուս Քրիստոսի փրկարար արյան հետքերն են դրոշմված: Եւ բնական է, որ Տիրոջը խոցած Գեղարդը իր ձեռքերով շոշափած ազգը երբեւէ չպիտի ընկրկեր պատմության դաժան փորձություններին առջեւ, քանզի Պողոս առաքյալի նման նա նույնպես բազում անգամներ անհողդողդ կերպով նայել է մահվան աչքերի մեջ եւ ասել՝ «Ինձ համար կյանքը Քրիստոս է, իսկ մեռնելը՝ շահ» (Փիլիպ. Ա. 21):

Սիրելի՛ հավատացյալ հայ ժողովուրդ, Մեր ոգու զորությունը մեր ժառանգության հանդեպ հավատարմության մեջ է, մենք միշտ հաղթանակած ենք դուրս եկել փորձություններից, երբ հավատարիմ ենք մնացել մեր եկեղեցուն, այն հավատի շնորհին, որ երկու հազարամյակ առաջ հայոց հողում սերմանեցին Տիրոջ հավատարիմ վկաներ Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալները: Եկե՛ք օգտագործենք այսօրվա ընծայած առիթը՝ Սուրբ Գեղարդին ծնրադրելու միջոցով վերանորոգենք մեր ուխտը հայոց առաջին լուսավորիչների քարոզի առջեւ, արժանի լինենք կոչվելու կենդանի վկաներ առաքելական մեր Սուրբ Հավատի, այժմ եւ միշտ եւ հավիտյանս. ամեն: